

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵՐՄԸՆԻՔ

ՅԱՐԱԳԱԾՈՑ ԳՈՒԱՌԻՒԻ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՔ.

Մեր ժամանակի Հայ մատենագիրք իրենց աշխարհագրական գրուածոց մէջ ինչպէս Վաղարշապատայ, նոյնպէս և Երմաւիր քաղաքի գաւառը յանձանօթս կդնեն. այս պատմառաւ մենք Երմաւը պատմական տեղեկութենէն յառաջ, Երարատեան դաշտի շըջակոյ գաւառաց վրայ նախընթացաբար այս տեղեկութիւնները կդնեմք, որուսաց սահմանին մէջն են, փարատելով առանց ականատեսութեան Երարատեան նահանգի այս գաւառները աշխարհագրողաց տարակոյսը:

Ովկէս Խորենացին բոլոր Հայաստան Հնգետասան աշխարհ բաժանելէն ետքը, նոյն աշխարհաց իւրաքանչիւրոց գաւառները ևս յանուանէ կնշանակէ իւր աշխարհագրութեան մէջ. որոց Հնգետասաններորդը կդնէ Եյրարատ, որ ՀԱՅԻ, տսէ, . . . և զմայր եկեղեցեացն ի թագաւորաբնակ և յարքայանիստ Վաղարշապատ քաղաքի, (Խոր. աշխարհագր. եր. 611. ի մատենագրութեան նորա):

Եյլ թէ այս գաւառներն ովկ որոշեց, կամ նոցա սահմաններն ի՞նչ ժամանակ բաժանուեց, ոչ Խորենացին կդրէ, և ոչ այլ յետագայ պատմէք:

Հայկագանց ժամանակին կաեննեմք՝ որ մեր Երամ նահանգեաը իւրիշխանութեան

սահմանները յարեմաից մինչեւ ի կեսարիա ընդարձակած ժամանակ, որ անբնակ երկիրները բնակչօք լցընելով, երկրորդ և երրորդ Հայք կոչեց՝ առաջինը բռն Հայաստանը համարելով (Խոր. Վ. Ժ. Բ.):

Խոկ Վաղարշակ Հայաստանի վրայ թագաւորելով, Հայաստանի իւրաքանչիւր գաւառների վրայ իշխող նահանգապետներէն նախարարութիւններ հաստատեց, ոմանց կոչումը գաւառի անունէն առնով, ոմանց ևս անունովը զգաւառն կոչելով. որոց համար Խորենացին ևս կիսուտովանի թէ, “Ո՛չ զիտեմ յանուարանցն զգաւառն անուանեն, եթէ յառնուն գաւառացն զնախարարութիւնն կոչեցիալ (Բ. Բ.):

Խորենացւոյ նշանակած Երարատեան նահանգի ոմանց գաւառաց անունը կայ, գաւառը չկայ, ինչպէս Բ, Գ, և Դ գաւառները, Գարեղեան, Երեղեան և Հաւնունիք ասացեալն, որոց անունով եղած զիւ զք կամ տեղիք նոցա սահմանակից գաւառաց մէջ կդնէ Հին Հայաստանի հեղինակը, և կիսուտովանի մեր ասածը, եր. 388, “Ենյայտ լեալ Հին անուան և սահմանին Գարեղենից,,:

Խոկ նոր Եշխարհագիրն Հ. Վ. ևոնդ Եւլիշանեան իւր քաղաքական աշխարհագրութեան մէջ ի համեմատութեան հին և նոր գաւառաց Հայաստանի եր. 24, Գարեղեան և Երեղեան գաւառները կը համարի վերին և ստորին Բասեն, երբ Բասենը ինքնին առանձին և առաջին գաւառն է Երարատեան նահանգի, և միթէ վերին և ստորին ասելով այլ գաւառն պիտի ցոյց տային. երբ այս ածականները մի և նոյն բառիւ գաւառի բաժանումն ցոյց

կտան, ուստի կառնու իւր գրածի ապացցցը, — ինքն զիտէ, մենք այսպիսի զըրուածքները առանց նախնեաց վկայութեան երբէք չենք ընդունել:

Գարեղեան և Երեղեան կոչուած դաւաները, ինչպէս պատմաբանք¹⁾ ցոյց կտան, այս երկու գաւառաց մէջ տեղն էին Քաղըւեանդայ՝ որ արեւմտեան կողմն է ի հարաւոյ Երասխայ, և Երշարունեաց, որ յիշեալ երկու գաւառաց արեւելքն է, և իւր հիւսիսային սահմանը կըձեւէ նոյնպէս Երասխ Երարատեան դաշտին մէջ, յորմէ կանջրպիտէ Երագածոտն գաւառ, և այս երկու գաւառաց դաշտավայրքն են որք ի միասին կըկազմեն զդաշտն Երարատեան, յերկրորդումն լինելով Աղարշապատ:

Բատ այսմ Գարեղեան և Երեղեան գաւառաց տեղը կմնան միայն Մասիս լեռն հարաւային արեւմտեան բազուկը, որոյ լերանց շարքը աղեղնաձեւ կդառնայ դէպ յարեւմտես մինչեւ ի Ճ'ակատը գաւառի Առղպ՝ Երասխայ և Եխուրեան գետոց խառնուրդը, և կպատէ Երշարունեաց գաւառի դաշտավայրը:

Եյս լերանց բարձրաւանդակ լեռնադաշտերի մէջ ո՞րքան զիւղօրայք կային ի հնումն, ո՞չ ինչ յիշատակութիւն չկայ. միայն այս լերանց շղթայից հարաւային արեւմտեան կողմանքը, որ այժմ տաճկաց սահմանին մէջն են, Գարեղեան գաւառ կըկոչուէր. իսկ հիւսիսային արեւմտեան

երեսքն մինչեւ ի լեռան Բարդող, ընդ որովէ Առղպ, Երեղեան կանուանուէր գաւառ, և այս Ոռուսաց սահմանին մէջ, ուր այս լերանց ի բարձրաւանդակ ձորամէջն կան երեք Ճայ զիւղօրայքն՝ Եպազիկօլ ասացեալ զիւղն՝ Գայլուայ լճի վրայ. ուր են և սահմանապահ Պաղախներն Ոռուսաց, Կուլապ և Մոլլաղամար, որ այս Մենակ ասացեալ հովատուն լեռների մէջն են սակաւ բնակիչներով, և միշտ գերեզարութեան մէջ խռովութեան ժամանակ:

Եյս գաւառի մէջն եղած վանօրայք անդամ ի հնումն, պատմաբաններէ ումանք կղնեն Երշարունեաց գաւառին մէջ, ինչպէս Կամրջաձորոյ ասացեալ վանքն, որ այս լեռնաշարքումն եղած Բամբակի ասացեալ լերին բարձրաւանդակի ձորամիջն է, ընդ որ Օօրայ - Էտապունի ասացեալ ձանապարհն է դէպ ի Առղովիտ, Եսողնիկ կղնէ Երշարունեաց գաւառի մէջ, գուցէ և սա առանց ականատեսութեան. «Ե ինեցաւ կդրէ, նախ առաջին մեծահոչակ ու խտն Կամրջաձոր ի գաւառին Երշարունեաց» :

Եյս տեղեց կերեէ որ ի նախնեաց անտի Ճարաստանի ամեն գաւառաց սահմանները որոշուած չեն, որ հին ժամանակի պատմազիրք անդամ այսպէս մէկ մէկի կիսառնեն զդաւառս. և ի՞նչ գաւառ պիտի լինեին Երեղեան և Գարեղեան. որոց Տիեալց Աղարշակ միայն «Ե Էսպարդեւաց», բնակելու համար, ըստ որոյ և նոր մասենազիրք վանքերի կամ քաղաքաց, զիւղերի և աւանաց տեղերը կըշփոթեն և գաւառները իրար կիսառնեն՝ մանաւանդ որ առանց ականատեսութեան, որոց շատերի համար կդրէ Ճին

(1) Այս երկու գաւառները որոշակի զրուած են իրենց սահմանի մէջ Զամշեան Պատմ. Գ. Հատորոյ աշխարհացց թերթի մէջ. իսկ Հ. Ելեշանի թերթի մէջ՝ սխալմամբ զրուած է Շիրակ գաւառում.

Հայաստան՝ գաւառն անծանօթ, որ լաւիսկ և յայտնի կծանուցանէ Խորենացին. բայց և այնպէս շատ տեղ կհակի դէպ յաղաւաղախօսն Բիւզանդ, չխրատուելով դեռ ևս յայլաղին մատենադիբներէ առնուլ վիայութիւն։

Եյսպէս են և Մասեացոտն և Շակատք Երարատեան նահանգի ՃԵ և ՃԻՐԴ գաւառները, որոնք գարձեալ Երարատեան գաշտի շրջապատն են. բայց վերը զրածիս պէս՝ անունները կան, գաւառները գրեթէ չկան, վասն զի իրենց կից եղած գաւառները բռնած են նոցա տեղը, և նոցա մէջն եղած շինք և աւանք, պատմագիրք կյիշեն մերձակայ գաւառաց մէջ։

Օոր օրինակ՝ Մասեացոտն գաւառը որ պիտի լինի յոտն Մասեաց, կաեսնեմք որ նոյնիսկ լիրին ստորոտը չունելով ընդարձակութիւն հիւսիսի կողմից, անմիջապէս կպատէ զայն եզեզնաշամբն Երտաւաղդայ Երկրորդի՝ Մասեաց ստորոտի սև ջուր ասացեալն, ուր նա ւհեծաւ յորս, և կաւլան զնա քաջք, ըստ Խորենացւոյն, և շամբի երկարութեամբը տարածուած Երշարունեաց գաւառը։

Քարդող լեառն վերջինն Մասեաց աշղեղնաձև բազկին, ուր է Առղպ գիւղն իւր աղահանքով, Շակատ գաւառի մէջն է, ինչպէս կդնեն պատմիչք, յորմէ կերեի որ Երեղեան գաւառի սահմանը մինչեւ այս լեառն միայն կերկարէր։

Իսկ Սուրբ Մարի առացեալ բերքն, յորմէ այժմ Առւրմալի կանուանի և բոլոր Երշարունեաց գաւառը, որ անմիջապէս Երասխայ հարաւային ափանց վրայ է, Քարդող լեառն մինչեւ երեք ժամ դէպ յարեելս է, պատմիչք Շակատք գաւառ

ուում կդնեն, երբ որ նորա մօան եղած Երուանդակիրտ քաղաքը մի և նոյն աշխանց վրայ է, կդնեն յԵրշարունիս։ (Հին Հայաստ. եր. 392)։

Եյս խառն ի խուռն աեղախսութիւններէն կիրեէի՝ որ ի հոռոմն ևս Հայաստանի գաւառաց սահմանները որոշուած չէին։

Ունք այս տեղս առանց սառրագրելու նշանակելով եթէ Երարատեան նահանգի քանից գաւառները կը շրջապատեն ըզդաշտն Երարատեան, ուր է Վաղարշապատ և Մայրն Երկեղեցեաց Հայաստան աշխարհի, ի սահմանի Առուստց, իրբեկեդրոն և միջոց աշխարհի ըստ հնոց, ըսկըսենք մեր սառրագրութիւնը Երագածուն և Երշարունիք եղած նախնական քաղաքներէն։

Յարեելից հիւսիսոյ Վաղարշապատայ է գաւառն Վարաժնունիք (այժմեան Գարաջիշակու մհալը). յարեելից՝ Առտայք, ուր է Երեան նահանգազլուխ քաղաքս (այժմ Վլիսրուլաղու մհալ). իսկ յարեելից հարաւոյ գաշտն Գլխայ և Եարուր։

Ի հիւսիսոյ՝ Անդ գաւառ, Եշոցք (Բամբակու մհալ), Ծիրակ մինչեւ Ելուրեան գետը Առուսաց սահմանին մէջ. Երագածուն գաւառ՝ որ Երագած լիրին երկարութեամբը ի հարաւոյ կտարածուի յարեելեան հիւսիսից՝ մինչեւ յԱխուրեան գետ յարեեմուտ հիւսիսոյ, և իւր մէջ կառնութ Վաղարշապատ և Երմաւիր հանգերձ իւրեանց ընդարձակ գաշտավայրով՝ մինչեւ Երասխ գետ։

Յարեեմուրից Շակատք գաւառ, Երասխաձոր, Երեղեան գաւառ, և կէս մի յԵրշարունեաց գաւառէն։

Եհարաւոյ Երշարունիք և Մասեացոտն գաւառ, որոց սահմանները և տարածութեան չափը՝ կը թողումք իրենց ստորագրութեանց մէջ։

Երազածոտն գաւառը՝ որ ստորագրած եմք Վաղարշապատայ պատմութեան մէջ, աստ նախ առաջին կտեղագրեմք Երմաւերը քաղաքը իւր պատմական տեղեկութեամբ, որ Երազածոտն գաւառին մէջն է։

Երմաւիր քաղաք շինեց զառաջնն Հայկայ թոռն Երամայիս Եահապետ՝ տուն բնակութեան իւր համար Երասխ գետի հիւսիսային ափանց վրայ, ուր որ իւր հայրըն ևս Երամանեակ Աօսեաց անտառ ձը գած էր։ “Իսկ որդի նորա Երամայիս, կը ի Խորենացին, շինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերը գետոյն, և անուանէ զնա յիւր անուն Երմաւիր, և զանուն գետոյն յանուն թոռնին իւրոյ Երաստայ Երասխ,» (Ե. Ժ. Պ.)։

Երմաւիր ըստ այսմ Երասխ գետի եզրն եղած փոքրիկ ըլքի վրայ լինելով, Երազածոտն գաւառի մէջն է, որոյ համար պարզ ևս կզըէ Խորենացին, ուր Երմանակ նախ քան իւր որդւոյ շինութիւնը՝ շինած էր “Մասն ինչ ի հիւսիսային կողմանէ դաշտին, և զոտն լերինն ի նոյն կողմանէ. և զլեառն անուանէ յանգագոյն յիւր անուն Երազած, և զկալուածն՝ ոտն Երազածու,» (Ենդ)։

Եհա և տեղին և գաւառն Երմաւրայ յայտնի ծանուցեալ անդ զառաջնն ի Խորենացւոյն, ուստի և Երմաւրայ գաւառը ծանուցեալ ի հնուց, եթէ և միայն ականատես լինէր տեղւոյն Հին Հայստանի հեղինակը, Երմաւրայ տեղին և

գաւառը չէր դնել յանձանօթու (Եր. 471—498)։

Խորենացին չելիշատակեր թէ ով որձաքար որմով պարիսպ կանգնեց Երմաւրայ. ի հարկէ, աշխարհքի նոր քաղաքանալու ժամանակին տուն բնակութեանը կերեկի թէ պարսպովն հանդերձ կիմացուէր, իսկ Զամչեան ուստի կառնու թէ Նարմա՝ որ Երամ նահապետի հայրն է, “Ենեաց պարիսպ քաղաքին (Երմաւրայ) վիմովք տաշելովք,» (Ե. Դ.). որոյ վկայութիւն չեմք գտնել ի պատմադիրս, վասն որոյ և անընդունելի:

Մայն թէ Երմաւիր, որ զառաջնն Երամայիս շինեց իւր համար տուն բնակութեան, պարսպապատ էր և աշտարակազարդ Երամայ աշխարհակալութեան ժամանակ. վասն զի երբ որ նա պատերազմի մէջ ձերբակալ արար զ Եիւքեարն կոչեցեալ Մադէս, և բերեց յԵրմաւիր, պատմութիւնը կվկայէ որ “Ենդ ուրեմն ի ծայրս աշտարակի պարսպին ցից վարսեալ երկաթի ընդ ճակատն, յորմն վարսել հրամայէ ի տեսիլ անցաւորաց,» (Ե. Ժ. Պ.): Յորմէ կերեկի թէ այս ժամանակին բաւական քաղաքացեալ էր Երմաւիր և պարսպապատ էր։

Ծովանդակ Հայկազանց ժամանակը թագաւորանիստ էր Երմաւիր, և տեսեց անդը քան Երշակունեաց թագաւորութիւնը մինչև Երուանդ Երկրորդ։ Ե. Ժ. Աւազ, որ ոչ Խորենացին և ոչ այլ պատմիչք յառաջ քան զնա յայլոց ազգաց անգամ չեն յիշատակեր թէ ինչ ինչ շինութիւններ, որպիսի մեծագործութիւններ արին յԵրմաւիր մեր Երի Հայկացունք՝ Երամէն մինչև ցՊարոյը, Պարոյ-

րէն ցտիրապետութիւն Աղեքսանդրի. ուրոց մէջ բաւական մեծամեծ աշխարհականին եղան, մեծամեծ պատերազմաց մէջ պանուեցին Ասորեսատանի թագաւորաց հետ, յունական և արօյական արշաւանքների մարտակից:

Արշակունեաց թագաւորութիւնը նուրոգուելու ժամանակին մեծն Արշակ իւրեղօրն Վաղարշակայ Վարդաք թագաւորութեան կտայ զՄծրին, (Խոր. Ա. Ե.), բայց նա ինքն Վաղարշակ Հայկազանց ցեղի օգնականութեամբ, ինչպէս կորէ Խորենացին, մակեղոնական զօրքերը Հայկայ զարմի քաջերի ձեռքով հալածելն ետքը, երբ որ “Դադարեալ խաղաղէր երկիրն նուածեալ ընդ ձեռամբ Վաղարշակայ,, և նահապետութիւնները կհաստատէր, այս ամենէն ետքը, կվեկայէ նոյն մեր պատմազիր թէ” ՅԵտ այսր ամենայնի մեհեան շինեալ (Վաղարշակայ) յԱրմաւիր, անդրիս հաստատէ արեգական և լուսնի և իւրոց նախնեաց,, (գիրք, Բ. Դ. Ե. և Բ.), որոց և քըլսմութիւնը տուել էր Վահագնի սերնդոցը, որոնք խնդրեցին Վաղարշակին “զմեհենիցնեցն պաշտամունս,, 144 ամօք Քրիստոսէ յառաջ:

Առաջինն Արտաշեսի ժամանակ կպայծառանայր Արմաւիր նորա աշխարհակառութեանց շնորհիւ. երբ որ Ասիա դուած Արտեմիտեայ, Հերակլի և Սպողոնի պղնձաձոյլ ոսկեզօծ արձանները Արտաշեսուղարկելով յաշխարհս մեր, Վաղարշակայ կարդած Վահունի քրմապետները Արտեմիտեայ և Սպողոնի պատկերները Արմաւիր կանգնեցին արեգական և լուսնի իւրոց հետ, իսկ Հերակլեայ առնապատկե-

րը իւրեանց սեպհական զիւղը ապահն յԱշակատ: (Բ. զիրք. Ժ.Օ.):

Իսկ մեծին Տիգրանայ թագաւորութեան օրովը աւելի ևս ընդարձակուեց Արմաւիր գաղթական բնակչօք. վասն զի Պաղեստինացւոց աշխարհքում պատերազմի մէջ շատ Հայք գերի անելով Տիգրան, երբ որ Հայաստան գարձաւ, “Օգերութիւն հրեկիցն, կորէ Խորենացին, կնստուցանէր յԱրմաւիր և յաւանին Վարդգեսի. (Բ. Ժ.Օ.):

Եյսպէս Արմաւիր թագաւորանիստ էր Տիգրանայ մահուանէն ետքը ևս, վասն զի Արտաւազգայ թագաւորութեան ժամանակ, որ Տիգրանայ որդին է, Արմաւիր բնակութիւն էր արքայի յԱրարատ, երբ որ նա օրէնք զրաւ իւր եղբարց և քերց, “Ո՛չ կեալ յԱյրարատ ի բնակութիւն արքային,, ըստ Խորենացւոյն. (Բ. զիրք. Ի.Օ.):

Արմաւրայ այս ամեն պատմական տեղեկութիւնը հին Հայաստանի հեղինակը շատ թերութեամբ նշանակելով, վայր ի վերց տեսութեամբ է անցել Արմաւրայ անցից վրայօք, որ Հայոց թագաւորական քաղաք էր Հայկազանց ժամանակին մինչև Արշակունեաց թագաւորութեան կէս միջոցը: Այլ միայն Արկրորդն Արուանդայ արքունիքը յԱրմաւրէն յԱրուանդաշատ փոխարքելը յիշելով, մերջացրել է Արմաւրայ սառապրութիւնը, որոյ պատմական տեղեկութիւնը կտեսի մինչև Բ. Արշակայ թագաւորութիւնը, զրեթէ մինչև փրկչական 370 թիւ, զոր մենք ահամի առ մի կորենք:

Գանք հիմա քննելու թէ ի՞նչ էր պատճառը, որ Հայկազուն թագաւորք յԱր-

մաւիր, և Արշակունիքի Մծրին և յեշ-
գեսիա կնստէին, իրենց աբքունիքը հա-
րաւային կողմը յեզր Հայաստանի ի Մի-
ջագետս Հայոց հաստատեցին գրեթէ մին-
չե ցԱղաղարշակ և մինչե ցերորդ դար
քրիստոնէութեան Եղիշիս:

Հայաստանի պատմական անցքերը ցոյց
կտան որ, Հայկազանց ժամանակ Հայաս-
տանի սահմանը շատ նեղ էր և անձուեկ,
հարաւային կողմէն կընդարձակուեր միայն
մինչե Վասպուրական նահանգը, ուր էր
Հարք գտաւոք, մեր նախնւոյն Հայկայ ա-
նունով Հայկաշն կոչուած, Հայաստա-
նի հիւսիսային արեւելեան կողմը տա-
կաւին բազմացած չլինելով ազգերով,
երկրի միջավայր սահմանում հաստատել
էին իրենց աբքունական քաղաքը:

Երկրորդ՝ հարաւի կողմից սահմանա-
կեց լինելով այն ժամանակ Սորեստանի,
դաշնակից և նիզակակից էին Սորուոց՝
Հայկազուն թագաւորք, ինչպէս կուս-
նուի Պարոյրայ ժամանակ, Հրաշեայ,
Օարմայրայ և սյոց և այլոց. որք նոցա-
հետ զօրաբաժին կինէին ի դէսպո պատե-
րազմի, ուստի և Հայաստանի հարա-
ւային սահմաններում երկիւղ շունէին
սահմանակից զրացիներէն, և դեռ ևս
ոչ Եղեքսանդր կար տիեզերական, և
ոչ մակեդոնական արշաւանքն յԵսիա.
Կիւրոս թագաւորելով կործանեց Մա-
րաց թագաւորութիւնը, և կանգնեց Պար-
սից պետութիւնը. բովանդակ այս ժա-
մանակները սոցա հետ նիզակակից էին
մեր Հայկազուն թագաւորք, մինչե որ
Եղեքսանդր Մակեդոնային Միջերկա-
կան ծովէն մինչե ի Գանգէս Հնդկաց ար-
շանելով, բոլոր սափական պետութեանց

թագաւորութիւնները ջնջեց, և զա-
յասաան ևս նոցա հետ միասին միօրինակի-
դրաւ ընդ մակեդոնական իշխանութեամբ:

Եյն ժամանակէն Հայաստանի հարաւ-
ային սահմանները՝ որպէս այլոց տիրաւ-
պետութեան տակ էին, նոյնպէս պատե-
րազմական արհաւրօք լի էր աշխարհը.
ուստի և մինչե մակեդոնական իշխանու-
թեանց անկումը, հաւանական է, որ հա-
րաւային սահմանաց բնակիչք ևս հետ
զհետէ քաշուած լինէին Հայաստանի խո-
րը:

Արշակ Պարթե մեծն, արևելք և Սոս-
րեստանի վրայ թագաւորելով, սպառ-
սպուռ ջնջեց մակեդոնական իշխանու-
թիւնը Սոխայէն, և տիրեց երրորդ մասին
աշխարհիս, ինչպէս որ Կորինացին կառ-
նու Հերոդոտոսէն. և իւր եղբայրն Վա-
ղարշակ Հայաստանի վրայ թագաւոր զը-
նելով, սահման կտայ նրան մասն ինչ ա-
րեւմաեան Սորեստանէն, Պաղեստինը,
Եսիա (փոքրն) և բոլոր Միջերկրայք,
Պանտոսի ծովէն մինչե այն տեղ, ուր
Կաւկաս կյանզի յարեւեան ծով. դըսա-
գրաց սխալ է, ինչպէս բանի միաքը ցոյց
կտայ՝ արեւելեան ծով ասելու էր. Պան-
տոսի ծովը՝ արդէն Կաւկասու արեւմաւոքն
է. ուրեմն ի ծովէն Պանտոսի մինչե այն
տեղ՝ ուր Կաւկաս յարեւեան ասելու
տեղ՝ յարեւելեանն ասելու էր՝ յանզի
ծով, այս ինքն Կասպից կամ Վրկանայ
ծովն, և Ետրապատական. “Եւ քաղաք
թագաւորութեան տայ նմա զՄծրին,,
մակեդոնական և այլ ազգաց արշաւանաց
յառաջն առնելու համար, և Աշխատայ
մուաքը իրրե սահմանագլուխ պահպա-
նելու. վասն զի այս տեղեց էր չին աշ-

խարհքի վաճառականութեան և ազգաց պատերազմական միակ ձանապարհը, ընդ որ երբեմն Քսերկսէս յարեմուտս յԱշլադայ, և Եղէքսանդր յարեելս մինչեւ ի Հնդիկս արշաւեցին, ընդ որ և յետոյ յոյնք և Հռովմայեցիք անցնելով, տիեզերակալեցին յԱսիա:

Եյս էր ահա պատճառը, որ մինչեւ հըսուվմէական տիեզերակալութիւնը, մեր Երշակունիթ թագաւորք իրրե կողմնակալ պարսկական պետութեան, իրենց արքունիքը կդնէին Հայաստանի հարաւային կողմը, յեզրսահմանացի Միջագետս Հայոց՝ թշնամու մուտքը պահելու, Եփրատը յարեմուց ստանէց ունելով Հայաստանի, մինչեւ Երշամայ և Երգարուժամանկները, երբ որ արդէն Հայաստանի այս ամեն սահմանները և յարեմուցից մինչեւ ի Աեսարիա Հռովմէական պետութեան տակն ընկնելով, Երգարէն ետքը Աանատրուկ թագաւորեց Հայաստանի մէջ, նորա որդւոյն հակառակ, որ սորա մահուանէն ետքը գնաց ի Մծրին և մեռաւ անդ:

Երուանդ Երկրորդ՝ որ թէ և Երշակունի, այլ թագաւորական գաւազանէ չլինելով, երբ որ հածութեամբ նախարարաց թագաւորեց ինչպէս կերեի, ի Մըծրին, և Աանատրկոյ որդիքը կոասից, իւր տէրութիւնը ասպահովելու և հզօր օգնական ունենալու համար, Հայոց Միջագետքը Հռովմէական իշխանութեան տուաւ Եփրատէն այս կողմը, ինքը բուն Հայաստանում ամրանալով իրրե ի միջոց աշխարհի, Երմաւրէն աբքունիքը փոխեց յԵրուանդաշատ իւրաշէն քաղաքը՝ Երասխայ ափանց վրայ Ռ'ակատք գաւառի մէջ:

Վասն զե՞նց թէ միայն իւր ապահովութեան համար շինեց Երուանդ այս նոր քաղաքը, կամ թշնամիէն պահուելու, այլ Երասխ գետը այս ժամանակ տեղափոխուելով՝ հեռացել էր քաղաքէն, և ձմեռը երկար ժամանակին՝ ջուր չէր լինել թագաւորական քաղաքին, և երկրորդ՝ Երմաւիր հարթ հաւասար դաշտի երեսը մէկ փոքրիկ բլթոյ ոստի վրայ լինելով, ոչ մի կողմից անհնար էր ամրացնել զայն թշնամու դէմ. ուստի այս երկու պատճառաւ Երուանդաշատ քաղաքը շինեց Երուանդնորա արևեմտեան կողմը քարակտուր բլթի վրայ, զոր կշըջապատէր Երասխ գետը ի խառնուրզս Ելսուրեանի:

Երուանդէն ետքը թէն լքաւ արքունիքը յԵրմաւիր, այլ շէն էր տակաւին բնակչօք մինչեւ Երշակ Երկրորդի ժամանակ, ցամ Տեառն 378 . . , երբ նա ինքն Երշակ չարակնելով Կամսարականաց ամուրկալուածների վրայ, Երտագերս ամրացի և Երուանդաշատի, ուր նոքտ կնատէին, իւր մօտ կոչեց նոցա ։ ։ Փ Լքեալ աբքունիսն Երմաւիր իրրե զագգական իւր ի պատճառս պատույ մէծարանաց (Պ. գիրք Լ. Ը.), և միահաղոյն զարս և զիանայս հանդերձ մանկամբք հըամայեաց կոտորելու . . :

Գուցէ այս անօրէնութեան հատուցումն եղաւ քաղաքին, որ այնուհետեւ լքաւ և ի բնակչոց և ամսյացաւ. ըստ ուրոյ և պատմազիքը յետ այնորիկ երեկ յիշատակութիւն շեն անել Երմաւրայ համար:

(Ե յետքոյ.)

ԱՅԻ ԱՐՔԵՊԵՄԿՈՊՈՍ.